Շաքի

Բնակչություն՝ 1390

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 98 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 6 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1720 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Գյուղը հիշատակվում է 5-րդ դարից: 19-րդ դարում՝ 1829 թվականին այստեղ վերաբնակություն են հաստատել Պարսկաստանից գաղթած 25 ընտանիք: Գյուղի շրջակայքում պահպանվել են Շաքի վանքի ավերակները, գերեզմանոց, մատուռ և խաչքար: Գյուղը հնուց ի վերնհայտնի է իր քաղցրահամ ջրերով: Գյուղից է սկիզբ առնում Շաքի գետը, որի վրա են գտնվում համանուն ջրվեժը և ՀԷԿ-ը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 286 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 1012 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 1623 գլուխ,
- խոզեր՝ 115 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 755:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 250 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 7400 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝7165 հա, որից՝
- վարելահող՝ 1377 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 45 հա, արոտ՝ 2514 հա, այլ հողատեսք՝ 3226 հա
- բնակավայրերի հողեր՝ 84 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 59 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝16 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 53 հա, որից անտառածածկ՝ 53 հա
- ջրային հողեր՝ 18 հա